Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

«31» մարտի 2021 թ. նիստի թիվ 51/1 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյան

.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

ԻՋԵՎԱՆ 2021

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը:

1.2. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի (7.11.2017, թիվ 1282-Ն, ՀՀ ԿԳ նախարար), «ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգի (02.03.2017, ԵՊՀ ԳԽ), «ԵՊՀ ԻՄ-ի էթիկայի կանոնագրքի» (26.02.2021 ԵՊՀ ԻՄ ԳԽ) հիման վրա:

1.3. Մագիստրոսական թեզը ինքնուրույն հետազոտական, վերլուծական և /կամ կիրառական նշանակության ավարտուն աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ բարձրացնելու և նոր լուծումներ առաջադրելու հմտությունները:

1.4. Մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրոսական կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:

1.5. Մագիստրոսական թեզը մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունը իրականացվում է 2-3-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 1-ին կիսամյակի ավարտը պետք է ունենան թեզի հաստատված թեմաներ և ղեկավարներ: Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության համար մագիստրոսական կրթական ծրագրում նախատեսվում է 14 կրեդիտ աշխատածավալ:

1.6. Մագիստրոսական թեզը պետք է համապատասխանի տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

1.7. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրության համար ուսանողը գրավոր դիմում է կրթական ծրագրի ղեկավարին (**Հավելված 1**) :

1.8. Ընտրված թեմաների ցանկը (ըստ ուսանողների և թեզի ղեկավարների) հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

1.9. Թեմաների հաստատված ցանկի մեկական օրինակ պահվում է ամբիոնում, դեկանատում և ՈՒՄՎ-ում:

1.10. Գիտական ղեկավարի փոփոխությունը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ ղեկավարի երկարատև գործուղում, ուսումնական տարվա ընթացքում աշխատանքից ազատում, երկարատև հիվանդություն), իսկ թեմայի փոփոխությունը՝ համապատասխան հիմնավորման առկայության դեպքում (**Հավելված 2, 3**):

2. <u>ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ</u>

2.1. Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

<u>**Աղյուսակ 1.**</u> Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները

Կառուցվածքը	**Ներկայացվող պահանջները**
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն **Հավելված 4**-ում ներկայացված ձևաչափի:
Ստորագրությունների էջ	Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, ղեկավարը և ամբիոնի վարիչը (տե՛ս **Հավելված 5**):
Համառոտագիր	Տրվում են աշխատանքի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները և համառոտագիր՝ ներկայացված հայերեն և անգլերեն (0,5-1 էջ):
Բովանդակություն	Ըստ հերթականության ներկայացվում են թեզի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին:
Ներածություն	Ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հետազոտության

	մեթոդները, օբյեկտը և առարկան, տեսական և/կամ կիրառական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը, վերլուծությունը և ամփոփումը:
Եզրակացություններ	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի արդյունքները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ:
Օգտագործված գրականության ցանկ	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է թեզը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են թեզին:

3. <u>ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</u>

3.1. Մագիստրոսական թեզը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, կազմված և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0սմ և ներքևից՝ 2.5սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը շարվում են 12pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 5-րդ էջ:

3.2. Թեզում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

3.3. Թեզի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկն ըստ այբբենական կարգի՝ հայերեն, ռուսերն, անգլերեն հաջորդականությամբ: Ցանկում գրականությունը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, … // URL: http://www.info..., 14.02.2017):

3.4. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը (Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), կամ տողատակում, ինչպես ներկայացվում է օրինակում[1]:

3.5. Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից:

4. <u>ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>

[1] Ասլանյան Լ., Ալավերդյան Ռ., Լույսի բևեռացումը և նրա հետազոտումը: Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014թ., էջ 53:

4.1. Մագիստրոսական թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման համակարգի համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն՝ (տե՛ս **Աղյուսակ 2):**

4.2. Մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

4.3. **Գիտական ղեկավարի պարտականություններն են.**

ա) մագիստրոսական թեզի առաջադրանքի կազմում,

բ) թեզի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն (**Հավելված 6**),

գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության և օգտագործման համար առաջարկություններ կամ խորհրդատվություն,

դ) խորհրդատվություն ուսանողին՝ թեզի կատարմանն առնչվող հարցերում՝ համաձայն խորհրդատվությունների համար ուսումնական ստորաբաժանման կողմից սահմանված կիսամյակային ժամանակացույցի,

ե) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,

զ) խորհրդատվություն (օգնություն) ուսանողին՝ ելույթի պատրաստման և պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության հարցում,

է) թեզի վերաբերյալ ղեկավարի գրավոր կարծիքի կազմում (**Հավելված 7**),

ը) եթե ուսանողը պլան-ժամանակացույցով չի աշխատել ապա ղեկավարը այդ մասին գրավոր տեղեկացնում է ամբիոն, որը հետագայում կարող է կցվել ղեկավարի բացասական կարծիքին:

4.4. **Գիտական ղեկավարի կարծիքում արտացոլվում են**.

ա) աշխատանքի արդիականությունը և կարևորությունը,

բ) ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը,

գ) աշխատանքում գիտական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի առկայությունը,

դ) գործնական առաջարկությունների առկայությունը,

ե) կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները,

զ) թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

է) երաշխավորություն թեզի հրապարակային պաշտպանության համար:

4.5. Գիտական ղեկավարի բացասական կարծիք դեպքում (**Հավելված 8**) կրթական ծրագրի ղեկավարը պարզաբանում է խնդիրը ղեկավարի, մագիստրոսի, անհրաժեշտության դեպքում այլ մասնագետների հետ, հաշվի է առնում նրանց կարծիքը, ընդունում որոշում պաշտպանության երաշխավորելու կամ մերժելու մասին:

4.6. Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունն իրականացվում է մասնագիտական ամբիոնում կամ միջամբիոնային հանձնախմբում՝ մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարի, ինչպես նաև ուսանողի գիտական ղեկավարի մասնակցությամբ:

4.7. Մագիստրոսական թեզը ամբիոն ներկայացնելու ժամանակ ուսանողը ստորագրում է «Մագիստրոսական թեզի կատարման ժամանակ ակադեմիական ազնվության և մասնագիտական էթիկայի պահպանման մասին» հայտարարություն, որով նա հավաստում է, որ ծանոթ է սույն կարգի պահանջներին և աշխատանքում պահպանված են ակադեմիական ազնվության սկզբունքները (**Հավելված 9**):

4.8. Թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության[2] հայտնաբերման դեպքում առաջարկվում է ողջամիտ ժամկետ դրանք շտկելու համար կամ թեզը չի թույլատվում պաշտպանության, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն: Այն ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին:

4.9. Մասնագիտական ամբիոնը պատասխանատու է նաև գրախոսման գործընթացի անկողմնակալ, թափանցիկ և օբյեկտիվ իրականացման համար (**Հավելված 10, 11**):

4.10. Մագիստրոսական թեզի գրախոսը, որպես կանոն, պետք է ունենա գիտական աստիճան:

4.11. Գրախոսների կազմը որոշվում է նախապաշտպանությունից հետո և հաստատվում է ամբիոնի վարիչի կողմից:

---

[2] «Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն», ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, գլուխ 5, հոդված 65, 4-րդ կետ (ընդունվել է 15.06.2006):

4.12. Բացասական գրախոսության դեպքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը պարզաբանում է խնդիրը գրախոսի, մագիստրոսի և նրա ղեկավարի հետ, հաշվի է առնում նրանց կարծիքը, ընդունում որոշում պաշտպանությանը երաշխավորելու մասին:

4.13. Մագիստրոսական թեզի գրախոսի բացասական կարծիքը, եթե ուսանողը համաձայն չէ դրա հետ, չի խոչընդոտում պաշտպանության թույլտվությանը:

4.14. Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում թեզը գնահատվում է «անբավարար»:

4.15. Թեզի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի[3]:

4.16. Թեզի պաշտպանության թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են կրթական ծրագրով ուսուցումը և կուտակել են համապատասխան կրեդիտներ: Պաշտպանության թույլտվություն ունեցող շրջանավարտների ցանկը հաստատվում է Մասնաճյուղի տնօրենի հրամանով:

<u>Աղյուսակ 2.</u> Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ժամանակացույց

Գործողություն	Ժամկետներ
Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում, ղեկավարի նշանակում և հրամանագրում	1-ին կիսամյակի ավարտ
Թեզի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում, հետազոտության պլանի մշակում, հետազոտության մեթոդների ընտրություն, գրականության վերլուծություն/ մեթոդաբանական հիմքերի ընտրություն	2-րդ կիսամյակի ավարտ
Թեզի հետազոտական մասի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի	3-րդ կիսամյակի ավարտ

[3] «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»՝ հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով:

քննարկում և հաղորդում գիտական սեմինարների ընթացքում, որոնց հիման վրա իրականացվում է աշխատանքի կատարման առաջընթացի միջանկյալ ստուգում	
Հետազոտության արդյունքների ամփոփում, թեզի հանձնում՝ ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանում	3-րդ կիսամյակ,՝ պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ
Գիտական ղեկավարի կարծիքի ներկայացում, թեզի նախապաշտպանություն, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում ուսումնական ստորաբաժանում մեկ շաբաթվա ընթացքում	3-րդ կիսամյակ,՝ պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ
Մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում[4] (տե՛ս Հավելված 10, Հավելված 11)	3-րդ կիսամյակ, գրախոսականի ներկայացում ուսումնական ստորաբաժանում պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ
Թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում:	3-րդ կիսամյակի ավարտ[5]

5. <u>ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</u>

5.1. Պաշտպանության նշանակված ժամկետից առնվազն 5 օր առաջ ամբիոն պետք է ներկայացված լինեն ուսանողի մագիստրոսական թեզի թղթային և էլեկտրոնային փաթեթը՝ աշխատանքը, ղեկավարի և գրախոսի կարծիքները (բոլորը pdf ձևաչափով), ինչպես նաև հրապարակային պաշտպանության ուսանողի ելույթի ppt պրեզենտացիան:

5.2. Ամբիոնի գործավարը հանձնաժողովի անդամներին ուղարկում է բոլոր ուսանողների աշխատանքների էլեկտրոնային փաթեթները՝ ներառյալ

[4] ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողը չի կարող լինել արտաքին գրախոս

[5] Թեզերի հրապարակային պաշտպանության ժամկետները սահմանվում են ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով:

մագիստրոսական թեզերի գնահատման ձևաչափի էլեկտրոնային տարբերակը:

5.3. Մինչև պաշտպանության օրը՝ հանձնաժողովի անդամները ծանոթանում են թեզերին և իրականացնում հետևյալ երեք չափանիշների նախնական գնահատում ըստ չափորոշիչների.

5.3.1. աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը (առավելագույնը՝ 2 միավոր),

5.3.2. աշխատանքի կատարումը և արդյունքները (առավելագույնը՝ 6 միավոր),

5.3.3 աշխատանքի շարադրումը և ձևավորումը (առավելագույնը՝ 4 միավոր):

5.4. Ուսանողն ամփոփիչ առցանց պաշտպանությանը նախապատրաստվելով պարտավոր է ունենալ՝

5.4.1. ZOOM (կամ Մասնաճյուղի կողմից հաստատված այլ) ծրագրով ներբեռնված համակարգիչ՝ տեսախցիկով,

5.4.2 ականջակալներ և միկրոֆոն,

5.4.2. անխափան և որակյալ ինտերնետային կապ,

5.4.3. ZOOM ծրագրով ներբեռնված և առնվազն 3G հեռախոսային ինտերնետային կապով օժտված հեռախոս սմարթֆոն, որը կծառայի որպես պահուստային սարք,

5.4.4. համակարգչին և հեռախոսին ներբեռնված իր աշխատանքի հրապարակային պաշտպանության ելույթի ppt պրեզենտացիան:

6. <u>ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ</u>

6.1. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կազմակերպվում է ԵՊՀ ԻՄ-ում:

6.2. Որոշակի հանգամանքների (արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի և այլն) դեպքում թեզերի պաշտպանությունը, ըստ անհրաժեշտության, կարող է կազմակերպվել հեռավար (առցանց) եղանակով:

6.2. Առցանց պաշտպանության դեպքում.

6.2.1. Պաշտպանության ընթացքը ղեկավարում է պաշտպանության կազմակերպիչը, և այն ամբողջովին տեսաձայնագրվում է:

6.2.2. Ակադեմիական խմբերի համար ամբիոնները պատրաստում են պաշտպանությունների հստակ ժամանակացույց՝ ամեն ուսանողի համար նախատեսելով առավելագույնը 10-15 րոպե ելույթի և 5 րոպե հարցերի համար:

6.2.3. Ամբիոններն ուսանողներին տեղեկացնում են նրանց համար նախատեսված անհատական ժամանակահատվածի մասին, տրամադրում են հանձնաժողովի ZOOM կոնֆերանսին միանալու ինտերնետային հղումը և պաշտպանության կազմակերպչի հեռախոսահամարը:

6.2.4. Իրենց համար նախատեսված ժամից 3-5 րոպե առաջ ուսանողներն ուղարկում են կոնֆերանսին միանալու հայտ և սպասում են ZOOM սպասման գոտում (Waiting room): Հերթը հասնելու դեպքում պաշտպանության կազմակերպիչը ընդունում է տվյալ ուսանողի հայտը (Admit) և միացնում ծրագրին. այդ պահից սկսվում է ուսանողի մագիստրոսական թեզի պաշտպանության գործընթացը:

6.2.5. Հերթը հասնելու պահին, եթե ուսանողը չի կարողանում ներկա գտնվել ZOOM ծրագրի սպասման գոտում, նա պարտավոր է sms հաղորդագրության միջոցով պատճառի մասին տեղեկացնել պաշտպանության կազմակերպչին: Վերջինս տեղեկացնում է հանձնաժողովին և անդամների համաձայնությամբ նշանակում պաշտպանության նոր ժամանակ, բայց ոչ ավել, քան մինչև տվյալ խմբի պաշտպանության ավարտը, որից հետո հանձնաժողովը իրավասու է համարել, որ այդ ուսանողը չի ներկայացել պաշտպանությանը:

6.2.6 Մագիստրոսը ամփոփիչ առցանց ատեստավորմանը մասնակցելու համար պարտավոր է՝

1. պաշտպանությանը միանալ իր անուն ազգանունով,
2. սենյակում լինել միայնակ,
3. պաշտպանության ընթացքում համակարգչով նստել պատի դիմաց՝ մշտապես միացրած պահելով տեսասարքը,
4. ինքնուրույն ցուցադրել պրեզենտացիան՝ սեփական համակարգչի էկրանը հասանելի դարձնելով (Screen share) հանձնաժողովի անդամների համար,

5. պաշտպանության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվությունը:
6. Սույն կետով սահմանված պայմաններից առնվազն մեկի խախտման դեպքում ուսանողի պաշտպանությունը դադարեցվում է, ուսանողը համարվում է չատեստավորված, անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

6.3. Պաշտպանությանը մասնակցում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը, գիտական ղեկավարը, գրախոսը և առնվազն 3 ունկնդիր:

6.4. Առցանց պաշտպանության դեպքում հանձնաժողովի անդամների տեսախցիկները պարտադիր պետք է միացված լինեն ողջ պաշտպանության ընթացքում:

6.5. Քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

6.6. Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 3):

6.7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

6.8. Շրջանավարտի թեզի գնահատականը որոշվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

6.9. Ուսանողի մագիստրոսական թեզը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:

6.10. Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ տվյալ խմբի պաշտպանության վերջում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահի կողմից՝ ողջ խմբի ներկայությամբ:

6.11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է:

6.12. Արձանագրության մեջ նշվում են մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված

որակավորումը, աստիճանը, Մասնաճյուղն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

7. ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

7.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին պարտավոր է հարցնել բողոքների առկայության մասին:

7.2. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է հանձնաժողովի նախագահին:

7.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի և սույն ընթացակարգային դրույթների խախտումներ:

7.4. Հանձնաժողովի նախագահը շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն «ԵՊՀ ԻՄ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգի 3-րդ աղյուսակով նախատեսված մագիստրոսական թեզի գնահատման չափանիշների և չափորոշիչների:

7.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման, գնահատման, միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

7.5.1. անհրաժեշտությունից ելնելով՝ դիտում է տեսաձայնագրության այն մասը, որն առնչվում է բողոքարկվող դեպքին,

7.5.2. փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

7.5.3. չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,

7.5.4. չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:

Աղյուսակ 3. Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն _____

Թեզի թեման _____

Հանձնաժողովի անդամ՝ գիտ. աստ., կոչում, ազգանուն, անուն _____

Գնահատման չափանիշ/ առավելագույն միավոր	Չափորոշիչ	Հատկացվող միավոր	Ընդհանուր միավոր
1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը *Առավելագույնը՝ 2 միավոր*	1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն և ամփոփում	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
2. Հետազոտության իրականացումը և արդյունքները *Առավելագույնը՝ 6 միավոր*	2.1. Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	2.2. Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	2.3.Կատարված է արդյունքների վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ (նաև առաջարկություններ)	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը ***Առավելագույնը՝ 4 միավոր***	3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրի-նակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը ***Առավելագույնը՝ 8 միավոր***	4.1. Զեկույցում հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, նպա-տակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխա-տանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	4.2. Զեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկա-պակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	4.3. Հարցերին և դիտողություններին զեկուցողը տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
	4.4. Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը	☐ - 2 ☐ - 1 ☐ - 0	
Արդյունարար առավելագույն միավորը՝ 20			

Աղյուսակ 4. Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, սանդղակները և հատկացվող միավորները

Թեզի թեման _____

Հանձնաժողովի անդամ՝ գիտ. աստ., կոչում, ազգանուն, անուն _____

Չափորոշիչներ/միավորներ	Չի համապատասխանում չափորոշիչին	Մասամբ համապատասխանում չափորոշիչին	Լիովին համապատասխանում չափորոշիչին
1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը			
Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն և ամփոփում	Ընտրված թեման արդիական չէ և չի նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակը ու խնդիրները հստակ չեն և սահմանված են անորոշ կերպով:	Ընտրված թեման բավականին արդիական է, սակայն չի նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակը ու խնդիրները հստակ են, սակայն աշխատանքում սահմանված են անորոշ կերպով:	Թեման խիստ արդիական է և նպաստում է ուսանողի մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակն ու խնդիրները հստակ են պարզորոշ սահմանված են աշխատանքում:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
2. Հետազոտության իրականացումը և արդյունքները			
Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան	Հետազոտությունը կատարված է ոչ ինքնուրույն և չի համապատասխանում դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները ճշգրիտ չեն և ուղղված չեն խնդիրների լուծմանը	Հետազոտությունը կատարված է ինքնուրույն, սակայն ոչ համաձայն դրված խնդիրներին Հավաքագրված տվյալները ճշգրիտ են, սակայն ուղղված չեն խնդիրների լուծմանը:	Հետազոտությունը կատարված է ինքնուրույն, սահմանված ժամկետներում և համաձայն դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները ճշգրիտ են և ուղղված են խնդիրների լուծմանը
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ	Ստացված արդյունքները հիմնավորված չեն և չեն պարունակում գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ	Ստացված արդյունքները հիմնավորված են, սակայն չեն պարունակում գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ	Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Կատարված է արդյունքների	Աշխատանքի եզրակաց-	Եզրակացությունները և	Եզրակացությունները և առաջարկությունները

վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ (նաև առաջարկություններ)	ությունները և առաջարկությունները հիմնավորված չեն կամ բացակայում են	առաջարկությունները մասամբ են բավարարում առաջադրված խնդիրներին և հիմնավորված են մասամբ	հստակ հիմնավորված են:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը			
Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը	Աշխատանքի շարադրանքը հստակ չէ, գրված է առանց տրամաբանական հաջորդականության	Աշխատանքի շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված, սակայն աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները մասամբ են համապատասխանում բովանդակությանը:	Աշխատանքի շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված, սակայն աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	Աշխատանքը ձևավորված է առանց տեխնիկական պահանջների պահպանման, բացակայում են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների, սակայն բացակայում են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների:Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը			
Զեկույցում հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	Աշխատանքի ներկայացումը ժամանակատար է, զեկուցողը չի ներկայացնում աշխատանքի արդիականությունը,նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Աշխատանքի ներկայացումը ժամանակատար է, զեկուցողը հստակ չի ներկայացնում աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Զեկուցողը հստակ հիմնավորվում է աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացում մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Զեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկապակցված	Ուսանողը զեկույցը փոխկապակցված չի ներկայացնում և չի բացատրում կատարված	Զեկույցը հստակ է և հետևողական, սակայն ուսանողը չի կարողանում լիովին ներկայացնել և բացատրել	Զեկույցը հստակ է և հետևողական, ուսանողը կարողանում է փոխկապակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել

ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները	աշխատանքը, չի հիմնավորում ստացված արդյունքները:	կատարված աշխատանքը, հիմնավորել ստացած արդյունքները:	ստացած արդյունքները:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Հարցերին և դիտողություններին զեկուցողը տալիս է հիմնավոր-ված և սպառիչ պատասխաններ	Ուսանողը չի պատասխանում տրվող հարցերին:	Ուսանողը տրվող հարցերին չի տալիս հիմնավորված և սպառիչ պատասխաններ:	Ուսանողը հարցերին և դիտողություններին տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**
Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը	Ուսանողը օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք չեն արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ուսանողը օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք մասամբ են արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ուսանողը օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք լիովին արտացոլում և պարզաբանում են աշխատանքի բովանդակությունը:
	0 միավոր	**1 միավոր**	**2 միավոր**

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆՄՈՒՇ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

_____ մագիստրոսական ծրագրի ղեկավար

_____

գիտ. աստիճան և կոչում, անուն, ազգանուն,

նույն ծրագրի ուսանող(ուհի)

անուն, ազգանուն

հեռ. _____

էլ.հացե _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հաստատել մագիստրոսական թեզի թեման հետևյալ վերնագրով՝ _____ :

Դիմող՝ (անուն, ազգանուն)

(ստորագրություն)

« » _____ 20__թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆՄՈՒՇ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

_____ մագիստրոսական ծրագրի ղեկավար

_____

գիտ. աստիճան և կոչում, անուն, ազգանուն,

նույն ծրագրի ուսանող(ուհի)

անուն, ազգանուն

հեռ. _____

էլ.հացե _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլ տալ մագիստրոսական թեզի ղեկավարի փոփոխություն հետևյալ պատճառով----------:

Դիմող՝ (անուն, ազգանուն)

(ստորագրություն)

« » _____ 20__թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԵՄԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՆՄՈՒՇ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

_____ մագիստրոսական ծրագրի ղեկավար

_____

գիտ. աստիճան և կոչում, անուն, ազգանուն,

նույն ծրագրի ուսանող(ուհի)

անուն, ազգանուն

հեռ. _____

էլ.հացե _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլ տալ մագիստրոսական թեզի թեմայի փոփոխություն հետևյալ պատճառով----------:

Դիմող՝ (անուն, ազգանուն)

(ստորագրություն)

« » _____ 20___ թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

[16 pt, Bold]

_____ ՖԱԿՈՒԼՏԵՏ *[14 pt, Bold]*

_____ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ *[14 pt, Bold]*

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ *[18 pt, Bold]*

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ *[30 pt, Bold]*

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ *[18 pt, Bold]*

«_____ » մասնագիտությամբ

_____ մագիստրոսի որակավորման

աստիճանի հայցման համար *[14, Bold, Italic]*

ԻՋԵՎԱՆ 2021

ՀԱՎԵԼՎԱԾ 5.

Ուսանող՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Գիտական ղեկավար՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

_____

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ *[13 pt, Bold, Italic]*

ստորագրություն

_____

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«_____»_____20___թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԼԱՆ –ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՆՄՈՒՇ

N	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
1.	Թեզի պլանի կազմում և ղեկավարի հետ համաձայնեցում	«»----------	
2.	Գրականության որոնում, ուսումնասիրում, մշակում, հիմնական գրականության վերլուծություն	«»----------	
3.	Առաջին բաժնի (գլուխ, ենթագլուխ, պարագրաֆ) կազմում և հանձնում ղեկավարին ստուգման համար	«»----------	
4.	Առաջին բաժնի վերանայում ղեկավարի կատարած դիտողությունների հիման վրա		
5.	Երկրորդ բաժնի կազմում և հանձնում ղեկավարին ստուգման համար	«»----------	
6.	Երկրորդ բաժնի վերանայում ղեկավարի կատարած դիտողությունների հիման վրա		
7.	Երրորդ բաժնի կազմում և հանձնում ղեկավարին ստուգման համար (առկայության դեպքում)	«»----------	
8.	Երրորդ բաժնի վերանայում ղեկավարի կատարած դիտողությունների հիման վրա		
9.	Մագիստրոսական թեզի հանձնում ղեկավարին	«»----------	

Ղեկավար՝ _____ (անուն, ազգանուն, հայրանուն)

Ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 7.

ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔԸ

_____ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

_____ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍԱՆՈՂ՝

_____ -ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____ ԹԵԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(թեմայի անվանումը)

Ղեկավարի կարծիքը գրվում է ազատ ձևով՝ անդրադառնալով ներքոհիշյալ հարցերին

1. Աշխատանքի արդիականությունը և կարևորությունը

_____

_____

2. Ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և եզրակացություններ անելու կարողությունը

_____

_____

3. Աշխատանքում գիտական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի առկայությունը

_____

_____

4. Գործնական առաջարկությունների առկայությունը

_____

_____

5. Կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները

_____

_____

6. Աշխատանքի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին

_____

_____

7. Երաշխավորություն աշխատանքի հրապարակային պաշտպանության համար։

_____

_____

Ղեկավար՝ _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___ թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 8.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՆՄՈՒՇ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
_____մագիստրոական ծրագրի ղեկավար
_____-ին
գիտ. աստ. և կոչ., անուն, ազգանուն,

_____
թեմայով մագիստրոսական թեզի գիտական ղեկավար
_____
գիտ. աստ. և կոչ., անուն, ազգանուն,

Ես՝ …….., լինելով ուսանող ----------ի գիտական ղեկավարը, ով գրում է …… թեմայով մագիստրոսական թեզը, գտնում եմ, որ նրա պատրաստած մագիստրոսական թեզը չի բավարարում «ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման ձևով մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգի պահանջներին: Ուստի կարծում ենք այն չի կարող թույլատրվել հրապարակային պաշտպանության:

Թեզի պաշտպանության չթույլատրման հիմքերը.(անհրաժեշտ է նշել)

1. **Աշխատանքի վատ որակը, այդ թվում.**
   - բովանդակային և մեթոդական էական սխալներ
   - անփույթ շարադրանք
   - կատարողի ինքնուրույնության բացակայություն
   - այլ (նշել)
2. **Մասնագիտական էթիկայի խախտում. այդ թվում.**
   - գրագողություն
   - տվյալների կեղծում
   - կեղծ հղումներ
   - վերաշարադրումների մեծ ծավալ
   - այլ (նշել)

Գիտական ղեկավար…….. անուն, ազգանուն

ՀԱՎԵԼՎԱԾ 9.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
_____կրթական ծրագրի ղեկավար
_____--ին
գիտ. աստ. և կոչ.,անուն, ազգանուն,

նույն ծրագրի ուսանող
_____-ից
անուն, ազգանուն

Ես՝ ……, հայտնում եմ, որ մագիստրոսական թեզը…….. թեմայով, որը ներկայացրել եմ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին հրապարակային պաշտպանության համար, պատրաստել եմ ինքնուրույն:

Այն զերծ է գրագողության տարրերից, փաստերի կեղծումից և կեղծ մեջբերումներից: Մեջբերումները, որոնք կատարվել են տպագիր կամ էլեկտրոնային սկզբնաղբյուրներից, ինչպես նաև ավելի վաղ պաշտպանված թեզերից ու ատենախոսություններից, ունեն համապատասխան հղումներ:

Ես ծանոթ եմ «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության» կանոնակարգին և «ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգին՝ համաձայն որի՝ (4.6 և 4.12 կետերի) հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում թեզը գնահատվում է «անբավարար»:

Անուն, ազգանուն_____
Ստորագրություն

«____»_____20_ թ

ՀԱՎԵԼՎԱԾ 10.

ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայի ուսանող

_____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(թեմայի անվանումը)

մագիստրոսական թեզի վերաբերյալ[6]

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

_____

_____**2. Հետազոտության իրականացումը և արդյունքները**

_____

_____

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

_____

_____

8. **Դիտողություններ**

_____

_____

9. **Եզրակացություն** (աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհմանը)

_____

_____

Գրախոս՝ _____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___ թ.

[6] Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի սույն կարգում սահմանված մագիստրոսական թեզի գնահատման չափանիշներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 11.

ԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Հարգելի _____

Գրախոսման նպատակով Ձեզ ենք ուղարկում ուսանող

_____

(ուսանողի անուն, ազգանուն)

_____

թեմայով մագիստրոսական թեզը:

Խնդրում ենք Ձեր գրախոսությունը ներկայացնել մինչև _____:

(ամսաթիվ)

Թեզի պաշտպանությունը նշանակված է _____:

(ամսաթիվ)

_____ ամբիոնի վարիչ՝ _____

(ամբիոնի անվանումը) (ստորագրություն)

Կ.Տ.